

Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2020թ. դեկտեմբերի 25-ի թիվ 244-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	2
I. ԱՄՓՈՓԱԳԻՐ	6
II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	6
III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	6
1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	9
2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	16
3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	17
IV. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	19
1. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ, ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ....	25
2. ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱԽՍԵՐ	26
3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	28
4. ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	28
5. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	29
6. ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	35
7. ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ.....	35
8. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ	36
9. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	37
10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	37

11.	ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ.....	37
12.	ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՄԻՄՅԱՆՑ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	38
13.	ԴՈՏԱՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ	38
V.	ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ.....	39
VI.	ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ.....	39
VII.	ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ.....	40

**Հաշվեքննության
հիմքը**

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի օգոստոսի 7-ի
թիվ 142/Ա որոշում:

**Հաշվեքննության
օբյեկտը**

ՀՀ ֆինանսների նախարարություն:

**Հաշվեքննության
առարկան**

ՀՀ ֆինանսների նախարարությունում 2020 թվականի
պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման
և ելքերի իրականացման կանոնակարգված
գործունեություն:

**Հաշվեքննության
չափանիշները**

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ
2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք,
«Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք,
«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Հանրային
հատվածի կազմակերպությունների հաշվապահական
հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ
օրենք, ՀՀ կառավարության 2019 թվականի դեպտեմբերի
26-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն
ապահովող միջոցառումների մասին» N 1919 որոշում,
«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, «Հայաստանի
Հանրապետության հանրային հատվածի
հաշվապահական հաշվառման ստանդարտ» և այլ
իրավական ակտեր:

**Հաշվեքննությունն
ընդգրկող
ժամանակաշրջանը**

2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. հունիսի 30-ը
ներառյալ:

**Հաշվեքննության
կատարման ժամկետը**

2020թ. օգոստոսի 17-ից մինչև 2020թ. հոկտեմբերի 31-ը
ներառյալ: ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի

սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա որոշմամբ հաշվեքննությունը կասեցվել է, իսկ 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշմամբ՝ վերսկսվել:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ, ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ութերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Արմեն Գևորգյանը:

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ ֆինանսների նախարարությունում հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի 2020թ. օգոստոսի 7-ի թիվ 142-Ա որոշման հիմքով:

Հաշվեքննության առաջադրանքով նախատեսվել է իրականացնել ֆինանսների նախարարությունում 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննությունն իրականացվել է 2020 թվականի օգոստոսի 17-ից մինչև դեկտեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 8-րդ վարչության կողմից:

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվեքննության իրականացման համար ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեին վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտները հատատատվել են 1,695,009,852.1 հազ. դրամ գումարի չափով, որից՝ հարկային եկամուտների և պետական տուրքերի գումարը կազմել է

1,602,252,712.8 հազ.դրամ, պաշտոնական դրամաշնորհները՝ 35,324,420.2 հազ. դրամ, այլ եկամուտները՝ 57,432,719.1 հազ. դրամ:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտների և 2018, 2019 թվականների ժամանակաշրջանների համադրելի ցուցանիշները հետևյալն են.

(Աղյուսակ 1)

Եկամտատեսակը	2018թ. (փաստ)		2019թ. (փաստ)		2020թ.	
	մլրդ դրամ	%-ը	մլրդ դրամ	%-ը	մլրդ դրամ	%-ը
Ընդամենը, որից՝	1,341.7	100.0%	1,565.5	100.0%	1,695.0	100.0%
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,258.1	93.8%	1,464.3	93.5%	1,602.3	94.5%
2. Պաշտոնական դրամաշնորհներ	11.3	0.8%	12.4	0.8%	35.3	2.1%
3. Այլ եկամուտներ	72.3	5.4%	88.8	5.7%	57.4	3.4%

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ կառավարության 2019 թվականի 26 դեկտեմբերի N 1919-Ն որոշմամբ (Հավելված 2) Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի եկամուտների հավաքագրման եռամսյակային բաշխումն՝ ըստ եկամուտների ձևավորման աղբյուրների դասակարգման առանձին խմբերի հաստատվել է հետևյալ համամասնությամբ.

(Աղյուսակ 2)

հազ.դրամ

Եկամտատեսակ	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Պետական բյուջեի եկամուտներ	357,837,487.8	808,147,342.6	1,218,708,774.8	1,695,195,470.0
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	340,093,394.2	770,271,300.7	1,160,072,837.0	1,607,752,712.8
Պաշտոնական դրամաշնորհներ	5,437,007.9	12,563,487.6	19,781,603.8	35,510,038.1
Այլ եկամուտներ	12,307,085.7	25,312,554.3	38,854,334.0	51,932,719.1

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված տնտեսական անկման կանխատեսումներից ելնելով և «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով պայմանավորված՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ցուցանիշներում առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները և վերջիններիս արդյունքում ձևավորված եկամուտները պետական բյուջեի ցուցանիշներում ներառելու հանգամանքով պայմանավորված, ինչպես նաև կառավարության լիազորությունների շրջանակներում «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում պետական բյուջեի եկամուտների ծրագրային ցուցանիշների մասով կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի եմակուտների տարեկան և կիսամյակային ճշտված ցուցանիշը կազմել են համապատասխանաբար 1,581.4 մլրդ դրամ և 733.4 մլրդ դրամ:

2020 թվականի տարեկան և առաջին կիսամյակի եկամուտների ծրագրային (ճշտված) ցուցանիշների և փաստացի կատարողականի տվյալները հետևյալն են.

(Աղյուսակ 3)
մլրդ.դրամ

	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստ	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Կատարման %-ն առաջին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ
Պետական բյուջեի եկամուտներ	1,695.0	1,581.4	808.1	733.4	716.7	45.3%	97.7%
այդ. թվում՝	-	-	-	-	-	0%	0%
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,602.3	1,447.3	770.3	688.9	680.3	47%	98.7%
Պաշտոնական դրամաշնորհներ	35.3	36.0	12.6	13.0	2.4	6.7%	18.5%
Այլ եկամուտներ	57.4	98.1	25.3	31.4	34.0	34.7%	108.2%

2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի փաստացի եկամուտները (716.7 մլրդ. դրամ) կազմել են կիսամյակային ճշտված ծրագրով կանխատեսված ցուցանիշի (733.4 մլրդ. դրամ) 97.7%-ը, որից հարկային եկամուտների և պետական տուրքերի փաստացի մուտքերը (680.3 մլրդ. դրամ) կազմել են ծրագրային ցուցանիշի (688.3 մլրդ. դրամ) 98.7%-ը:

Պետական բյուջեի կիսամյակի փաստացի եկամուտների 94.92%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի, 0.34%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների, 4.74%-ը՝ այլ եկամուտների հաշվին:

2019 թվականի առաջին կիսամյակի համեմատ 2020թ. առաջին կիսամյակի պետական բյուջեի եկամուտները նվազել են 5.5%-ով կամ 41.8 մլրդ դրամով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Արձանագրության 4-րդ էջի վերջին պարբերությունում նշված այլ եկամուտների տեսակարար կշիռը 4.8%-ի փոխարեն կազմել է 4.7%:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Այլ եկամուտների տեսակարար կշիռը փաստացի կազմել է 4.74%, ինչը արձանագրված է սույն եզրակացությունում:

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջե փաստացի մուտքագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի գումարը կազմել է 680.3 մլրդ դրամ գումար՝ 98.7%-ով ապահովվելով ՀՀ կառավարության կիսամյակային ճշտված ծրագրով կանխատեսված ցուցանիշը:

2020 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի կառուցվածքը ըստ եկամտի տեսակների հետևյալն է.

- 31.4%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին՝ կազմելով 213.3 մլրդ. դրամ, որից 126 մլրդ. դրամը ստացվել է ՀՀ ներմուծվող ապրանքներից, այդ թվում՝ 49.8 մլրդ. դրամը գանձվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար: Մնացած 87.3 մլրդ. դրամը գանձվել է ՀՀ-ում արտադրվող ապրանքներից և ծառայություններից:
- 30.4%-ը ապահովվել է եկամտային հարկի հաշվին՝ կազմելով 207 մլրդ. դրամ:
- 14.3%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 97.3 մլրդ. դրամ:
- 7.7%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով 52.6 մլրդ. դրամ:
- Մասնավորապես՝ հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 29.2 մլրդ. դրամ, հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 23.4 մլրդ. դրամ: Նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ ակցիզային հարկի գծով եկամուտները աճել են 5.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է օրենսդրական փոփոխությունների արդյունքում ակցիզային հարկի դրույքաչափերի աճով և նոր դրույքաչափերի հաստատմամբ:
- 4.4 %-ն ապահովվել է մաքսատուրքի հաշվին՝ կազմելով 29.8 մլրդ. դրամ:
- 2.2 %-ը ապահովվել է շրջանառության հարկի հաշվին՝ կազմելով 14.7 մլրդ. դրամ:
- 1.6%-ը ապահովվել է սոցիալական վճարի հաշվին՝ կազմելով 10.8 մլրդ. դրամ:
- 4.3%-ը ապահովվել է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների հաշվին՝ կազմելով 29.1 մլրդ. դրամ:
- 1.6 %-ը ապահովվել է այլ հարկերի հաշվին՝ կազմելով 10.8 մլրդ. դրամ, մասնավորապես՝ 4.2 մլրդ. դրամ կազմել են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված

դրոշմանիշային վճարները, 3.8 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, 1.2 մլրդ դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար սահմանված տուգանքները, 1.0 մլրդ. դրամ՝ ճանապարհային հարկը, 0.5 մլրդ. դրամ՝ ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող միասնական մաքսային վճարը, 0.4 մլրդ. դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 29.4 մլն դրամ՝ արտոնագրային հարկը:

- Հաշվետու ժամանակահատվածում հարկերի անցումային գերավճարից մարված հարկային պարտավորությունների գումարը կազմել է 193.6 մլն դրամ:
- 2.2 %-ը ապահովվել է պետական տուրքերի հաշվին՝ կազմելով 15 մլրդ դրամ: Վճարված պետական տուրքերը կազմել են կիսամյակի ծրագրի 69.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու և պետական գրանցման համար սահմանված պետական տուրքերի կատարողականով:

Մասնավորապես՝ ավելի քան 5.1 մլրդ դրամ են կազմել օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, 5.4 մլրդ դրամ՝ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ ու արտոնագրեր (թույլտվություններ) տալու և շուրջ 2.1 մլրդ դրամ՝ պետական գրանցման համար գանձվող տուրքերը, որոնք առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշն ապահովել են համապատասխանաբար 66.8 %-ով, 74.5 %-ով և 70.8%-ով: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ պետական տուրքի գծով մուտքերն նվազել են 12.8%-ով կամ 2.2 մլրդ. դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված տուրքերի (28.3%, 2 մլրդ դրամ), պետական գրանցման համար գանձված տուրքերի (31.5%, 961.1 մլն դրամ), ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձված տուրքերի (49.1%, 590.1 մլն դրամ), հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձված տուրքերի (37.1%, 398.6 մլն դրամ) նվազման հանգամանքով:

Իսկ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերի մասով հակառակը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը գերազանցվել է

56.7%-ով կամ 1.9 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է 2020 թվականի փետրվարի 1-ից մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար պետական տուրքի սահմանմամբ՝ հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե ապահովելով 1.5 մլրդ դրամի մուտքեր՝ 54.4%-ով ապահովելով առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշը:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են նաև բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների ու տրանսպորտի բնագավառներում լիցենզավորման համար գանձվող տուրքերը՝ կազմելով համապատասխանաբար 6.9 անգամ (516.1 մլն դրամով) և 7.2 անգամ (276.9 մլն դրամով):

ՊԵԿ կողմից հաստատված եզրակացությունների համաձայն 2020թ. առաջին կիսամյակի և նախորդ համադրելի ժամանակաշրջանի ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի, բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված (այդ թվում հարկային ուսումնասիրությունների արդյունքում) և ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով վերադարձված գումարների, ինչպես նաև վարկառուներին և համավարկառուներին հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով համադրելի ցուցանիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 4)
մլն.դրամ

Հ/Հ	Ցուցանիշ	2019թ.	2020թ.	
		Հունվար-հունիս	Հունվար-հունիս	Աճի տեմպ %
1	2	4	6	7
1	ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումար	32,814.5	36,042.2	109.8

2	Հաշվետու կիսամյակին և եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի գծով, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումար	13,754.5	22,924.1	166.7
3	ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումար	430.7	166.4	38.6
4	Վարկառուներին և համավարկառուներին հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված վճարման հանձնարարականների հանրագումար	3,366..3	5,848.1	173.7
5	ԸՆԴԱՄԵՆԸ	50,366.0	64,980.9	129.0

2020թ. առաջին կիսամյակում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումարները կազմել են 36,042.2 մլն դրամ, որը նախորդ համադրելի ժամանակաշրջանի ցուցանիշից ավելի է 9.8 տոկոսով, նմանապես՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումարը, նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ ավելի են 66.7 տոկոսով:

Ի տարբերություն ԱԱՀ-ի մասով վերը նշված փոխհատուցված գումարների, ԱԱՀ-ի վերադարձի հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ նվազել են 61.4 տոկոսով, ինչը հիմնականում պայմանավորված է COVID-19-ի հանգամանքով:

Վարկառուներին և համավարկառուներին հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել է 73.7 տոկոսով:

2020 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջե վճարված հարկային եկամուտներն ու պետական տուրքերն ըստ եկամտային հաշիվների և ծախսային ուղղությունների հետևյալն է.

(Աղյուսակ 5)

հազ. դրամ

Բյուջե մուտքերը ըստ եկամտային հաշիվների.

Ժամանակահատված	Հարկերի միասնական հաշվից բյուջե մուտքեր	Այլ հաշիվներից բյուջե հարկային մուտքեր	Մաքսային ծառայության կողմից գանձված գումարներ	Ընդամենը բյուջե հաշվեգրված եկամուտներ
2020թ. 1-ին կիսամյակ, այդ թվում՝	596,166,973	26,636,883	123,388,048	746,191,904
Հունվար	133,445,781	5,965,293	21,214,740	160,625,813
Փետրվար	67,231,868	4,352,398	21,001,219	92,585,485
Մարտ	102,800,953	5,331,998	22,879,590	131,012,541
Ապրիլ	140,523,351	4,339,032	17,688,570	162,550,953
Մայիս	70,019,017	3,436,667	16,784,319	90,240,003
Հունիս	82,146,003	3,211,495	23,819,610	109,177,108

*Հարկերի միասնական հաշվի մուտքերում հաշվի են առնվել վերահաշվարկները և ճշտումները:

(Աղյուսակ 5.1)

Բյուջեի եկամուտներից կատարված վերադարձները.

հազ. դրամ

Ամիս	Անցումային գերավճարի g վերադարձ հարկատու ներին	Դեբետային գերավճարից վերադարձ հարկատուներ ին, այդ թվում՝ ՊԵԿ եզրակացությո ւնների համաձայն վերադարձված	Վարկառու ներին հիփոթեքա յին վարկի սպասարկմ ան համար վճարված տոկոսներ	ԱԱՀ-ի վերադար ձ (Tax free)	Այլ ելքեր	Ընդամենը հարկերից վերադարձն երի գումարը
Հունվար	56,203	13,420,945	358,516	25,973	65,463	13,927,100
Փետրվար	27,404	5,155,686	2,009,365	15,212	73,812	7,281,479
Մարտ	51,140	13,429,330	416,063	45,022	39,254	13,980,809
Ապրիլ	31,643	10,172,212	593,086	39,883	41,634	10,878,458
Մայիս	11,721	5,403,687	1,824,020	23,650	34,200	7,297,278
Հունիս	15,535	11,815,858	642,884	16,648	46,514	12,537,439
Ընդամենը	193,646	59,397,718	5,843,934	166,388	300,877	65,902,563

2020թ. առաջին կիսամյակի արդյունքներով պետական բյուջե զուտ մուտքերը՝

(Աղյուսակ 5.2)

Ամիս	Հարկային եկամուտներ և պետական տուրքերի գումարը
Հունվար	146,698,714.0
Փետրվար	85,303,966.7
Մարտ	117,031,737.1
Ապրիլ	151,672,496.0
Մայիս	82,942,728.1
Հունիս	96,639,669.6
Ընդամենը 2020թ. 1-ին կիսամյակ	680,289,311.5

հազ. դրամ

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Արձանագրության 10-րդ էջի 5.2 աղյուսակում «680,289,311.5» թիվը առաջարկում ենք փոխարինել «680,289,311.4» թվով:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հարկային եկամուտներ և պետական տուրքերի գումարը 2020 թվականի 1-ին կիսամյակին կազմել է 680,289,311.5 հազ.դրամ, ինչը հարկային եկամուտների և պետական տուրքերի հունվար-հունիս ամիսների գումարների հանրագումարն է: Այն ըստ ամիսների ներկայացված է Աղյուսակ 5.2-ում:

2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020 թվականի առաջին կիսամյակում արտաքին աղբյուրներից ստացվել են ավելի քան 2.4 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով առաջին կիսամյակի ճշտված պլանի 18.5%-ը և տարեկան ճշտված պլանի 6.7%-ը:

Մասնավորապես՝ ստացվել են հետևյալ պաշտոնական դրամաշնորհները.

1. Եվրամիության կողմից բյուջետային աջակցության ծրագիր՝ Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումներ՝ 929.5 մլն. դրամ,
2. Կովկասի բնության հիմնադրամի կողմից՝ «COVID-19 Արտակարգ դրամաշնորհի պայմանագրի» շրջանակներում՝ 267.2 մլն. դրամ,
3. Նպատակային դրամաշնորհներ՝ 1,217.7 մլն. դրամ,
այդ թվում՝

- Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկից	322.4 մլն.դրամ
- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից	347.3 մլն.դրամ
- Գլոբալ հիմնադրամի կողմից տրամադրված	156.5 մլն.դրամ
- Գերմանիայի զարգացման վարկերի բանկից (KFW)	83.9 մլն.դրամ
- ԱՄՆ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրեր	184.0 մլն.դրամ
- Համաշխարհային բանկից	115.6 մլն.դրամ
- ՄԱԿ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրեր	8.0 մլն.դրամ

Դրամաշնորհների կատարողականի ցածր ցուցանիշը պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարողականով, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 9.4%-ը: Մասնավորապես, չեն ստացվել 9 ծրագրերով նախատեսված 6.2 մլրդ. դրամ դրամաշնորհները, իսկ 10 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ստացվել են ոչ ամբողջությամբ՝ 17.8%-ով, որոնք կազմել են 1.2 մլրդ. դրամ, իսկ մեկ ծրագրի շրջանակներում ստացվել է 8 մլն դրամ, որը ծրագրով նախատեսված չէր:

2020 թվականի առաջին կսամյակի ընթացքում ստացված նպատակային դրամաշնորհներից 322.4 մլն դրամ (նախատեսվածի 31.6%-ը) տրամադրվել է Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի, 347.3 մլն դրամ (նախատեսվածի 12.3%-ը)՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, 156.5 մլն դրամ (նախատեսվածի 28.6%-ը)՝ Գլոբալ հիմնադրամի, 83.9 մլն դրամ (նախատեսվածի 7.8%-ը)՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW), 184 մլն դրամ (նախատեսվածի 36.6%-ը)՝ ԱՄՆ-ի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, 115.7 մլն դրամ (նախատեսվածի 10.8%-ը)՝ համաշխարհային բանկի և 8 մլն դրամ (նախատեսվածի 3.4%-ը)՝ ՄԱԿ-ի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջե մուտքագրված պաշտոնական դրամաշնորհները 64%-ով կամ 4.3 մլրդ. դրամով զիջել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները 2020 թվականի առաջին կիսամյակում կազմել են 34 մլրդ. դրամ՝ 8.2%-ով կամ 2.6 մլրդ. դրամով գերազանցելով առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների օգտագործումից ստացված տոկոսավճարների կիսամյակային ծրագրի շուրջ 78.1%-ով գերազանցման հանգամանքով: 2020 թվականի առաջին կիսամյակի այլ եկամուտները նախորդ տարվա նույն հաշվետու ժամանակաշրջանի նկատմամբ պակաս են կազմել շուրջ 11.5%-ով կամ 4.4 մլրդ. դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների, պետական

սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից ստացված մուտքերի և իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի նվազմամբ:

Մասնավորապես այլ եկամուտներից՝

- 7.8 մլրդ դրամը ստացվել է ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից՝ 81.2%-ով ապահովվելով կիսամյակային ծրագրային ցուցանիշը, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտները նվազել են 49.6%-ով կամ 7.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ ոստիկանության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց ստացված մուտքերի նվազմամբ, ինչպես նաև պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի միջոցները պետական բյուջեում չներառելու հանգամանքով և մաքսային մարմինների կողմից մատուցվող մի շարք ծառայությունների համար նախկինում սահմանված մաքսավճարների փոխարեն պետական տուրքի սահմանմամբ:
- 8.3 մլրդ դրամը կազմել է հաշվետու ժամանակահատվածում բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների օգտագործումից ստացված տոկոսավճարները՝ 78.1%-ով գերազանցելով առաջին կիսամյակում ծրագրված մուտքերը և 57.9%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը, ինչը պայմանավորված է 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջեի եկամուտների համեմատ ծախսերի համեմատաբար ցածր կատարողականով, պետական գանձապետական պարտատոմսերի լրացուցիչ տեղաբաշխումներով, ինչպես նաև այն հանգամանքով, որ 2019 թվականին եվրապարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցների մի մասն ավանդադրվել է, իսկ տոկոսագումարներ ստացվել են նաև 2020 թվականի առաջին կիսամյակում: 2020 թվականի առաջին կիսամյակում ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքվել է թվով 89 ավանդային պայմանագիր՝ 727 մլրդ դրամ ընդհանուր գումարով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կնքվել է 62 ավանդային պայմանագիր՝ 503 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Հաշվետու ժամանակահատվածում ներդրված ավանդների միջին մեծությունը կազմել է շուրջ 8 մլրդ դրամ, որը գրեթե չի փոփոխվել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշի համեմատ: 2020 թվականի ընթացքում ներդրված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 5.2%՝ նախորդ տարվա 5.6%-ի դիմաց: Առաջին կիսամյակի վերջի դրությամբ Կենտրոնական բանկում ներդրված ավանդի մնացորդը կազմել է 417 մլրդ դրամ:

- 7.3 մլրդ դրամը կազմել է պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց հաշվետու ժամանակահատվածում ստացված տոկոսավճարները, որոնք 47.3%-ով գերազանցել են առաջին կիսամյակում ծրագրված մուտքերը և 1.6 անգամ կամ 2.9 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:
- 5.6 մլրդ դրամը կազմել է 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը՝ 87.4%-ով ապահովելով առաջին կիսամյակի ծրագրված մուտքերը և 16%-ով կամ 1.1 մլրդ դրամով պակաս կազմելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված ՀՀ ոստիկանության, ՀՀ վարչապետի աշխատակազմի Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կիրառված պատժամիջոցների արդյունքում գանձված գումարների նվազմամբ:
- 1.3 մլրդ դրամը կազմել են իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից հաշվետու ժամանակահատվածում ստացված շահութաբաժինները՝ կազմելով առաջին կիսամյակում կանխատեսված մուտքերի 86%-ը և 18.6 անգամ (1.2 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Վերջինս պայմանավորված է ՀՀ ՏԿԵՆ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կառավարման ներքո գտնվող ընկերություններում պետական մասնակցության դիմաց ստացված շահութաբաժինների աճով, որոնք կազմել են 1.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա առաջին կիսամյակում ստացված 28.8 մլն դրամի դիմաց:
- 1.4 մլրդ դրամը կազմել են կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և հաղթահարման ապահովման միջոցառումների ֆինանսավորման նպատակով հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե մուտքագրված տրանսֆերտները՝ 5.9%-ով գերազանցելով առաջին կիսամյակի ծրագիրը:

IV. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին օրենքով ֆինանսների նախարարության կողմից իրականացվող ծախսերի տարեկան պլանը սահմանվել է 234,248.3 մլն. դրամ, տարեկան ճշտված պլանը՝ 228,483.4 մլն. դրամ: 2020 թվականի առաջին կիսամյակի պլանը կազմում է 118,853.2 մլն. դրամ, ճշտված պլանը՝ 111,856.4 մլն. դրամ, իսկ ֆինանսավորումը կազմել է 108,809.3 մլն. դրամ: Կատարողականը կազմել է 97.21 տոկոս:

Ֆինանսների նախարարության կողմից իրականացված փաստացի ծախսը կազմել է 108,854.1 մլն. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 108,740.8 մլն. դրամ: 2019 և 2020 թվականների առաջին կիսամյակների ծախսերի կատարողականների համեմատականը հետևյալն է.

(Աղյուսակ 6)

հազ. դրամ

Ժամանակաշրջան	Ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Կատարման % 6=4/2 x100%
1	2	3	4	5	6
2019 1-ին կիս.	109,856,806.6	101,817,929.1	100,801,031.1	100,894,069.2	91.76%
2020 1-ին կիս.	111,856,381.8	108,809,293.8	108,740,839.5	108,854,062.7	97.21%

ՀՀ Ֆինանսների նախարարության 2020 թվականի առաջին կիսամյակի բյուջեի ծախսերի կատարողականը ըստ ծրագրերի (միջոցառումների) հետևյալն է.

(Աղյուսակ 7)

Հազ. դրամ

Ծրագրի կոդը	Միջոցառում, հոդված	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամանակա հատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Փաստ	Փաստացի ծախս	Կատարման %-ը
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		228,483,360.05	111,856,381.83	108,809,293.77	108,740,839.45	108,854,062.7	97.21
1006	Արտարժույթային պետական պարտատոմսերի թողարկմանն առնչվող ծախսեր	32.50	31.00	0.00	0.00	0.00	0.00
1006	ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովում	31,000.00	11,600.00	8,338.42	8,338.42	8,338.42	71.88
1006	Պարտքի կառավարմանն առնչվող տեղեկատվական համակարգերի և ծրագրերի սպասարկում	37,167.90	22,461.40	22,008.09	22,008.09	22,008.09	97.98
1006	Կառավարության պարտքի սպասարկում	168,023,209.15	81,810,383.83	79,803,349.16	79,803,349.16	79,803,349.16	97.55
	- Ներքին տոկոսավճարներ	85,495,848.90	41,335,245.03	41,087,874.71	41,087,874.71	41,087,874.71	99.40
	- Արտաքին տոկոսավճարներ	82,527,360.25	40,475,138.80	38,715,474.45	38,715,474.45	38,715,474.45	95.65
1006	Մուրհակների սպասարկում	93,322.30	45,371.60	45,318.14	45,318.14	45,318.14	99.88
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	35,136.00	16,764.00	9,792.00	9,792.00	9,792.00	58.41

1018	Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում	39,830.20	19,800.00	0.00	0.00	0.00	0.00
1018	Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ԿՖԿՏՀ ներդրում	1,820,363.10	910,181.60	0.00	0.00	0.00	0.00
1031	Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում	30,412.00	10,670.00	0.00	0.00	0.00	0.00
1093	Սնանկության գործերով կառավարչական ծառայությունների ձեռքբերում	34,000.00	17,000.00	12,060.00	12,060.00	12,060.00	70.94
1108	Պլանավորում, բյուջետավորում, գանձապետական ծառայություններ, պետական պարտքի կառավարում, տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության մշակում և մոնիտորինգ	2,478,408.40	1,034,973.90	990,361.43	921,907.11	1,035,130.36	89.08
	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	1,793,735.70	747,389.90	747,389.90	681,637.98	790,334.82	91.20
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	329,230.50	122,847.20	122,847.20	122,787.20	122,787.20	99.95
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	158,695.90	79,348.00	79,348.00	79,348.00	79,348.00	100.00
	- Ներքին գործուղումներ	38,738.76	14,015.16	10,990.40	8,348.00	11,159.30	59.56
	- Համակարգչային ծառայություններ	25,278.20	10,006.30	2,594.40	2,594.40	2,594.40	25.93
	- Կառավարչական ծառայություններ	23,708.24	12,532.24	7,452.24	7,452.24	7,452.24	59.46
	- Այլ հոդվածներ	109,021.10	48,835.10	19,739.29	19,739.29	21,454.40	40.42

1108	Ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային ծառայություններ	243,512.50	97,556.20	84,592.22	84,592.22	84,592.22	86.71
1108	ՀՀ միջազգային վարկանիշի տրամադրում	82,316.70	82,316.70	80,164.69	80,164.69	80,164.69	97.39
1080	ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	9,134.43	9,134.43	9,134.43	9,134.43	9,134.43	100.00
1185	Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ	729.87	729.87	729.87	729.87	729.87	100.00
1108	ՀՀ ֆինանսների նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավում	11,649.20	5,824.60	0.00	0.00	0.00	0.00
1137	Էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկում	19,700.00	9,850.00	8,205.00	8,205.00	8,205.00	83.30
1137	Գնումների պլանների կազմման, էլեկտրոնային մրցույթների անցկացման, պայմանագրերի կատարման և գնումների հաշվետվողականության՝ միմյանց ինտեգրված մոդուլների տեխնիկական սպասարկում	109,955.00	59,978.00	43,735.72	43,735.72	43,735.72	72.92
1136	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
1206	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում շենքերի և շինությունների հիմնանորոգում	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00

1136	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռքբերում (Արդյունաբերական չափագիտության լաբորատորիաների սարքավորումներ)	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
1205	ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցում	4,945.80	2,472.90	2,472.90	2,472.90	2,472.90	100.00
1212	Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրում և Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցում	55,378,535.00	27,689,281.80	27,689,031.70	27,689,031.70	27,689,031.7	100.00
	- Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ	55,312,261.70	27,656,143.30	27,655,968.40	27,655,968.40	27,655,968.4	100.00
	- Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում	66,273.30	33,138.50	33,063.30	33,063.30	33,063.30	99.77

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Արձանագրության 16-րդ էջի 7-րդ աղյուսակում կիրառված «Բլումբերգ և Ռոյթերս տեղեկատվական համակարգերի առևտրային տերմինալների սպասարկման ու պարտքի գրանցման և կառավարման DMFAS 6.0 համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ» միջոցառման անվանումն անհրաժեշտ է վերանայել՝ համապատասխանեցնելով այն ՀՀ 2020 պետական բյուջեի «1006. Պետական պարտքի կառավարում» ծրագրի «11004. Պարտքի կառավարմանն առնչվող տեղեկատվական համակարգերի և ծրագրերի սպասարկում» միջոցառման անվանմանը:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Միջոցառման վերնագրի վերաբերյալ նկատառումը հաշվի է առնվել:

1. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ, ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 2,495,967.9 հազ.դրամ գումար, 2020թ. տարեկան ճշտված պլանը կազմել է 2,281,662.1 հազ.դրամ, առաջին կիսամյակի պլանը կազմել է 974,154.6 հազ.դրամ, կիսամյակի ճշտված պլանը՝ 1,034,973.9 հազ.դրամ, դրամարկղի ծախսը՝ 921,907.1 հազ.դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 113,066.7 հազ.դրամ:

Նշված միջոցառման շրջանակներում ծախսերն ունեն հետևյալ կատարողականները.

Միջոցառում (հոդված)	2020թ. առաջին կիսամյակի ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղի ծախսը	Փաստացի ծախս	Կատարման %-ը $6=4/2 \times 100\%$
1	2	3	4	5	6
Ընդամենը	1,034,973.90	990,361.43	921,907.11	1,035,130.36	89.1%
Աշխատանքի վարձատրություն	950,484.60	949,585.10	883,773.18	992,470.02	93.0%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	81,477.20	37,396.21	34,753.81	39,280.22	42.7%
Այլ ծախսեր և պարտադիր վճարներ	3,012.10	3,380.12	3,380.12	3,380.12	112.2%

Աշխատանքի վարձատրության գծով փաստացի ծախսը կազմել է **992,470.02 հազ. դրամ**, դրամարկղի ծախսը՝ **883,773.18 հազ. դրամ**, աշխատանքի վարձատրության մասով առաջին կիսամյակի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքը կազմում է **108,183.29 հազ. դրամ**:

Աշխատանքի վարձատրության գծով ծախսի (դրամարկղի ծախսի) կատարողականը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է 38.7 տոկոս, իսկ կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ՝ 93.0 տոկոս:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերումների և այլ ծախսերի գծով ծախսերի կատարողականները համապատասխանաբար կազմել են 42.7 տոկոս և 112.2 տոկոս: Կիսամյակի ճշտված պլանի համեմատ տարբերությունը հիմնականում պայմանավորված է հունիս ամսվա որոշ ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումները հուլիս ամսին կատարելու հանգամանքով:

2. ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱԽՍԵՐ

«Արտարժույթային պետական պարտատոմսերի թողարկմանն առնչվող» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 32.5 հազ.դրամ գումար, իսկ 2020թ. առաջին կիսամյակի պլանը կազմել է 31.0 հազ.դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում սույն միջոցառմամբ՝ ՀՀ կողմից

թողարկվող արտարժութային պետական պարտատոմսերի մինչև դրանց ամբողջական մարումը միջազգային ֆոնդային բորսաների պաշտոնական ցանկերում ցուցակման ծառայությունների համար տարեկան վճարի գծով, միջոցներ չեն ծախսվել, ինչը պայմանավորված է նրանով որ նախորդ վճարումը կատարվել է 2019թ. օգոստոսին, հետևաբար 2020թ. համար վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ. օգոստոս ամսին:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Առաջարկում ենք Արձանագրության 22-րդ էջի 2-րդ կետում տեքստը վերախմբագրել՝ հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը.

«Արտարժութային պետական պարտատոմսերի թողարկմանն առնչվող ծախսեր» միջոցառման գծով տարեկան ճշտված պլանը կազմել է 32.5 հազ դրամ, ընդ որում հիշյալ գումարից 1.5 հազ դրամը նախատեսված է եղել արտարժութային պետական պարտատոմսերի ցուցակման տարեկան վճարի համար (ի սկզբանե ծրագրավորված է եղել 1593.50 հազ. դրամ) և 31.0 հազ. դրամը՝ «Bloomberg Finance L.P.» կազմակերպության կողմից իրավաբանական անձի նույնականիշի տրամադրման դիմաց վճարումը կատարելու համար:

«Bloomberg Finance L.P.» կազմակերպության կողմից իրավաբանական անձի նույնականիշի տրամադրման դիմաց գումարն ենթակա է վճարման օգոստոս ամսին, քանի որ նախորդ վճարումը կատարվել էր 2019թ. օգոստոսին:

Ինչ վերաբերվում է շրջանառության մեջ գտնվող արտարժութային պետական պարտատոմսերը, մինչև դրանց ամբողջական մարումը միջազգային ֆոնդային բորսաների պաշտոնական ցանկերում ցուցակման ծառայությունների դիմաց վճարմանը, ապա նշենք, որ 2020 թվականի պետական բյուջեից փաստացի վճարում չի իրականացվելու, քանի որ Իռլանդական ֆոնդային բորսայի պարտատոմսերի ցուցակման ծառայության վճարը առաջիկա 10 տարվա համար միանվագ կատարվել էր 2019 թվականի սեպտեմբերին նոր արտարժութային պետական պարտատոմսերի գլխավոր տեղաբաշխողների կողմից:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Ըստ էության առարկություն չի ներկայացվել, տրամադրվել է լրացուցիչ տեղեկատվություն:

3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

«ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովում» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 31,000.0 հազ.դրամ գումար, իսկ 2020թ. առաջին կիսամյակի ճշտված պլանը կազմել է 11,600.0 հազ.դրամ: Սույն միջոցառումով՝ պետական պարտատոմսերի թողարկման, պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման և գանձապետական պահառուի համակարգի վերաբերյալ հեռուստատեսային և ռադիո հաղորդումների, հայտարարությունների հեռարձակման, ՀՀ պետական պարտքի տարեկան հաշվետվության և պետական բյուջեի կատարման հաշվետվությունների հրապարակման գծով, հաշվետու ժամանակաշրջանում դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են 8,338.42 հազ.դրամ: Կիսամյակի պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 3,261.6 հազ.դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է գնման գործընթացով, մասնավորապես՝ համապատասխան պայմանագրերի՝ մարտի սկզբից ուժի մեջ մտնելու հանգամանքով:

4. ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 37,167.9 հազ.դրամ գումար, իսկ 2020թ. առաջին կիսամյակի ճշտված պլանը կազմել է 22,461.4 հազ.դրամ: Բլումբերգ և Ռոյթերս տեղեկատվական համակարգերի առևտրային տերմինալների սպասարկման ու պարտքի գրանցման և կառավարման DMFAS 6.0 համակարգի տեխնիկական սպասարկման համար, հաշվետու ժամանակաշրջանում դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են 22,008.1 հազ.դրամ, որից 14,725.6 հազ.դրամը կազմել է Բլումբերգ և Ռոյթերս առևտրային տերմինալների սպասարկման, իսկ 7,282.5 հազ.դրամը՝ պարտքի գրանցման և կառավարման DMFAS 6.0 համակարգի տեխնիկական սպասարկման վճարները: Կիսամյակի պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 453.3 հազ.դրամ, ինչը պայմանավորված է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի կանխատեսումային և փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերությամբ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Արձանագրության 23-րդ էջի 4-րդ կետի 1-ին պարբերության մեջ «14,725» թիվը փոխարինել «14,725.6» թվով:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Առաջարկությունը ընդունվել և տեխնիկական վրիպակը ուղղվել է:

5. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

«ՀՀ Կառավարության պարտքի սպասարկում» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 168,023,209.1 հազ.դրամ գումար, 2020թ. առաջին կիսամյակի պլանը կազմել է 81,810,383.8 հազ.դրամ, նույնքան էլ ճշտված պլանը, դրամարկղի ծախսը՝ 79,803,349.2 հազ.դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 2,007,034.7 հազ.դրամ:

Կառավարության պարտքի սպասարկման միջոցառման 2020թ. առաջին կիսամյակի կատարողականը հետևյալն է՝

(Աղյուսակ 9)
հազ. դրամ

Միջոցառում (հոդված)	2020թ. առաջին կիսամյակի ճշտված պլան	Ֆինանսավորո ւմ	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Կատարմ ան %-ը 6=4/2 x100%
1	2	3	4	5	6
Ընդամենը	81,810,383.8	79,803,349.2	79,803,349.2	79,803,349.2	97.55
Ներքին տոկոսավճարներ	41,335,245.0	41,087,874.7	41,087,874.7	41,087,874.7	99.40
Արտաքին տոկոսավճարներ	40,475,138,8	38,715,474.5	38,715,474.5	38,715,474.5	95.65

Միջոցառման շրջանակներում պետական գանձապետական պարտատոմսերի սպասարկման մասով կիսամյակի պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 247,370.3 հազ. դրամ, ինչը պայմանավորված է կատարված կանխատեսումների և գանձապետական պարտատոմսերի փաստացի եկամտաբերության տարբերությամբ:

Արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկման մասով կիսամյակի պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 1,759,664.4 հազ. դրամ, ինչը պայմանավորված է, որը Նախարարության կողմից մեկնաբանվում է 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR, 6-ամսյա EURIBOR կանխատեսումային դրույքաչափերի և 2020 թվականի առաջին կիսամյակի վճարումների համար կիրառված փաստացի դրույքաչափերի տարբերության հանգամանքով, ինչպես նաև մի շարք վարկերի գծով մասհանումների պլանային ցուցանիշների էական թերակատարումներով:

2020թ. առաջին կիսամյակի ՀՀ պետական պարտքի կառուցվածքը և 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համադրելի տվյալները հետևյալն են.

(Աղյուսակ 10)
մլրդ դրամ

ՀՀ պետական պարտքի կառուցվածքը	31.12.2019 մլն ԱՄՆ դոլար	31.12.2019 մլրդ դրամ	30.06.2020 մլն ԱՄՆ դոլար	30.06.2020 մլրդ դրամ	
				մլրդ դրամ	%
ՀՀ պետական պարտք	7,321.3	3,512.0	7,718.8	3,723.9	100
որից՝					
ՀՀ կառավարության պարտք	6,831.9	3,277.3	7,243.8	3,494.7	93.8
այդ թվում՝					
արտաքին պարտք	5,295.2	2,540.1	5,504.4	2,655.6	71.3
այդ թվում՝					
արտաքին վարկեր և փոխառություններ	4,306.7	2,065.9	4,536.3	2,188.5	58.8
ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր	7.0	3.3	6.7	3.2	0.1
ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսեր	973.7	467.1	953.5	460.0	12.4
արտաքին երաշխիքներ	7.8	3.8	7.9	3.8	0.1
ներքին պարտք	1,536.7	737.2	1,739.4	839.2	22.5
այդ թվում՝					
ներքին վարկեր և փոխառություններ	-	-	-	-	
ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական	1,412.8	677.7	1,595.2	769.6	20.7

Հաստատվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի
2020թ. օգոստոսի 7-ի թիվ 142/Ա որոշմամբ

պարտատոմսեր					
ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսեր	124.0	59.5	144.2	69.6	1.9
ներքին երաշխիքներ	-	-	-	-	
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտք	489.3	234.7	475.0	229.2	6.2
որից					
ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկեր	129.0	61.9	121.4	58.6	1.6

ՀՀ պետական պարտք	7,321.3	3,512.0	7,718.8	3,723.9	100
այդ թվում՝					
ՀՀ արտաքին պետական պարտք	5,784.5	2,774.8	5,979.4	2,884.7	77.5
ՀՀ ներքին պետական պարտք	1,536.7	737.2	1,739.4	839.2	22.5

ՀՀ պետական պարտք	7,321.3	3,512.0	7,718.8	3,723.9	100
որից՝					
ՀՀ դրամով ներգրավված պարտք	1,419.7	681.0	1,601.9	772.8	20.8
արտարժույթով ներգրավված պարտք	5,901.5	2,831.0	6,116.9	2,951.0	79.2

2020թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 3,723.9 մլրդ. դրամ, 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ այն աճել է 6.03%-ով կամ 211.9 մլրդ. դրամով, իսկ 2019թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 12.8%-ով: ՀՀ պետական պարտքի 77.5%-ը բաժին է ընկնում ՀՀ արտաքին պետական պարտքին, իսկ 22.5%-ը՝ ՀՀ ներքին պետական պարտքին: Միաժամանակ՝ ՀՀ պետական պարտքի 79.2%-ը բաժին է ընկնում արտարժույթով ներգրավված պարտքերին, իսկ 20.8%-ը՝ ՀՀ դրամով ներգրավված պարտքերին:

ՀՀ կառավարության պարտքը կազմել է 3,494.7 մլրդ. ՀՀ դրամ, 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ այն աճել է 6.63%-ով կամ 217.4 մլրդ. դրամով, իսկ 2019 հունիսի 30-ի նկատմամբ՝ 14.5%-ով:

ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 229.2 մլրդ. ՀՀ դրամ, 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ այն նվազել է 2.37%-ով կամ 5.56 մլրդ. դրամով, իսկ 2019թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 8.6%-ով:

ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2,655.6 մլրդ ՀՀ դրամ, 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ այն աճել է 4.55%-ով կամ 115.5 մլրդ. դրամ, իսկ 2019թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 12.6%-ով:

ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 839.2 մլրդ. ՀՀ դրամ, 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ այն աճել է 13.7%-ով, իսկ 2019թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 20.9%-ով:

2020թ.-ի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքի 71.3%-ը բաժին է ընկել կառավարության արտաքին պարտքին, իսկ 22.5 %-ը՝ ներքին պարտքին: Իսկ ՀՀ կառավարության արտաքին պարտքի կառուցվածքում 82.4 %-ը կազմել են արտաքին վարկերը և փոխառությունները, իսկ 17.3%-ը՝ ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսերը: ՀՀ կառավարության ներքին պարտքի 91.7%-ը կազմել են ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերը, իսկ 8.3%-ը՝ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսերը:

2020թ.-ի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին պարտքի կառուցվածքը ըստ վարկատուների հետևյալն է.

(Աղյուսակ 11)
մլն ԱՄՆ դոլար

ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը	31.12.2019	30.06.2020
Ընդամենը	4,306.7	4,536.3
Կառուցվածքն ըստ վարկատուների, %	100.0	100.0
այդ թվում՝		
Միջազգային կազմակերպություններ	75.2	76.7
որից՝		
Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկ (IBRD)	17.8	17.1
Ջարգացման Միջազգային Ընկերակցություն (IDA)	23.5	21.6
Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկ (EBRD)	0.4	0.4
Եվրոպական Ներդրումային Բանկ (EIB)	2.7	2.7
Գյուլ. Ջարգացման Միջազգային Հիմնադրամ (IFAD)	1.5	1.4
ՕՊԵԿ-ի Միջազգային Ջարգացման Հիմնադրամ (OFID)	1.3	1.2
Ասիական Ջարգացման Բանկ (ADB)	17.9	16.8
Արժույթի Միջազգային Հիմնադրամ (IMF)	1.2	7.1
Եվրամիություն (EU)	1.7	1.6
Եվրասիական Ջարգացման Բանկ (Կայունացման և Ջարգացման Եվրասիական Հիմնադրամի կառավարիչ)	7.2	6.8
Օտարերկրյա պետություններ	24.4	22.9
որից՝		
Ռուսաստանի Դաշնություն (RF)	9.2	8.3

Գերմանիա (KfW)	5.9	5.7
Ֆրանսիա (France)	3.0	3.0
ԱՄՆ (USA)	0.4	0.3
Ճապոնիա (JICA)	5.2	4.9
Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամ	0.1	0.1
Չինաստանի Արտահանման-Ներմուծման Բանկ	0.5	0.5
Առևտրային բանկեր	0.5	0.4
որից՝		
ԿԲՍ Բանկ (Բելգիա)	0.1	0.1
Ռայֆայզն Բանկ (Ավստրիա)	0.2	0.2
Էռստե Բանկ (Ավստրիա)	0.2	0.2

2020թ. առաջին կիսամյակում ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված տոկոսավճարները կազմել են 79.8 մլրդ. դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է 6.76 մլրդ. դրամով: Ներքին տոկոսավճարները կազմել են 41.09 մլրդ. դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է 7.55 մլրդ. դրամով: Արտաքին տոկոսավճարները կազմել են 38.72 մլրդ. դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 0.78 մլրդ. դրամով:

2020թ. առաջին կիսամյակում ՀՀ կառավարության պարտքի գծով կատարվել են հետևյալ վճարումները.

(Աղյուսակ 12)
մլն. դրամ

2020թ.	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Ընդամենը
Ընդամենը տոկոսավճարներ	3,046.5	8,576.4	26,173.3	30,031.4	8,216.4	3,759.3	79,803.3
ներքին տոկոսավճարներ, այդ թվում՝	203.3	4,764.2	8,936.1	26,680.2	124.5	379.6	41,087.9
պետական գանձապետական պարտավորումների գծով	203.3	4,764.2	8,936.1	26,680.2	124.5	379.6	41,087.9
արտաքին տոկոսավճարներ, այդ թվում՝	2,843.3	3,812.2	17,237.2	3,351.2	8,091.9	3,379.7	38,715.5
արտաքին աղբյուրներից ստացված վարկերի գծով	2,843.3	3,812.2	2,619.6	3,351.2	8,091.9	3,379.7	24,097.8
արտարժույթով պետական պարտավորումների գծով	-	-	14,617.7	-	-	-	14,617.7

2020թ. առաջին կիսամյակում պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 206.4 մլրդ. դրամ,

ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է 193.9 մլրդ դրամով:

2020թ. առաջին կիսամյակում պետական բյուջեի պակասուրդը 46.9%-ով ֆինանսավորվել է ներքին փոխառու միջոցների հաշվին՝ կազմելով 96.7 մլրդ. դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է 70.1 մլրդ. դրամով, իսկ արտաքին փոխառու միջոցների հաշվին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 109.6 մլրդ. դրամ՝ կազմելով բյուջեի պակասուրդի ֆինանսավորման 53.1%-ը, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 123.8 մլրդ դրամով:

2020թ. առաջին կիսամյակում պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ունի հետևյալ կառուցվածքը.

(Աղյուսակ 13)

մլրդ.դրամ

Ֆինանսավորման աղբյուրը	Ընդամենը	Հոնվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
Ընդամենը ֆինանսավորում փոխառու զույր միջոցների հաշվին, այդ թվում՝	206.4	19.8	7.0	(2.2)	33.2	148.1	0.5
ներքին աղբյուրներից, այդ թվում՝	96.7	25.1	13.2	2.6	35.4	13.4	7.1
պետական գանձապետական պարտատվյալների տեղաբաշխումից զույր մուտքեր, այդ թվում՝	96.7	25.1	13.2	2.6	35.4	13.4	7.1
տեղաբաշխումից մուտք	184.9	28.7	18.4	12.6	96.3	15.6	13.3
մարում / հետգնում	(88.2)	(3.6)	(5.2)	(10.0)	(61.0)	(2.2)	(6.2)
արտաքին աղբյուրներից, այդ թվում՝	109.6	(5.3)	(6.2)	(4.8)	(2.2)	134.7	(6.6)
նպատակային վարկեր	22.3	3.3	2.2	3.6	6.2	3.5	3.4
բյուջետային աջակցության վարկեր	135.6	-	-	-	-	135.6	-
վարկերի և փոխառությունների մարում	(48.2)	(8.6)	(8.4)	(8.4)	(8.4)	(4.4)	(10.1)

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Արձանագրության 23-րդ էջի 5-րդ կետի 1-ին պարբերության վերջում «2,007,034.7» թիվը առաջարկում ենք փոխարինել «2,007,034.6» թվով:

Միաժամանակ առաջարկում ենք «Կառավարության պարտքի սպասարկում» հատվածից ընդհանրապես հանել ՀՀ պետական պարտքին և պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորմանն առնչվող հատվածները, քանի որ.

- 1) Կենտրոնական բանկի պարտքի ծավալը և դինամիկան որևէ կերպ չի անդրադառնում կառավարության պարտքի սպասարկման ծավալի վրա,
- 2) այդ հատվածում մեջբերում է կատարվում ՀՀ պետական պարտքի դինամիկային և կառուցվածքին ու չի կատարվում որևէ վերլուծություն, թե ինչպես է թվարկվածը անդրադառնում կառավարության պարտքի սպասարկման ծավալի վրա:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հաշվեքննվող օբյեկտի կողմից առարկություն չի ներկայացվել, իսկ կլորացման հետ կապված արձագանքը հաշվի է առնվել:

6. ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

«Մուրհակների սպասարկում» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 93,232.0 հազ.դրամ գումար, 2020թ. առաջին կիսամյակի պլանը կազմել է 45,371.60 հազ.դրամ, նույնքան էլ ճշտված պլանը, դրամարկղի ծախսը՝ 45,318.14 հազ.դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 53.46 հազ.դրամ:

Թերակատարումը, ֆինանսների նախարարության հիմնավորմամբ, կապված է 1-ին կիսամյակում մարման ենթակա մուրհակների մուրհակատերերի կողմից թվով 4 մուրհակների վճարման հայտերի չներկայացմամբ:

7. ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ

«Պետական հիմնարկների եվ կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 35,136.0 հազ.դրամ գումար, 2020թ. առաջին կիսամյակի ճշտված պլանով թվով 459 աշխատակցի հաշվարկով պլանավորվել է 16,764.0 հազ.դրամ: Դրամարկղի ծախսը կազմել է 9,792.0 հազ. դրամ՝ սոցիալական փաթեթներով ապահովվել է թվով 326 աշխատակից, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 6,972.0 հազ.դրամ, ինը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանում չհամալրված հաստիքների՝ 133 միավոր, հանգամանքով:

8. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2020թ. 1-ին կիսամյակում ծախսեր չեն կատարվել և ծրագրով նախատեսված միջոցները չեն օգտագործվել:

Մասնավորապես՝ Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրման նպատակով նախատեսված շուրջ 910.2 մլն դրամ միջոցները չեն օգտագործվել պայմանավորված տեղեկատվական համակարգերի ներդրման կազմակերպման համար անհրաժեշտ խորհրդատուի ներգրավման գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրի չավարտելու հանգամանքով:

Նույն հանգամանքով պայմանավորված՝ չի օգտագործվել նաև ՀՀ ֆինանսների նախարարության և ՌԴ ֆինանսների նախարարության միջև՝ Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով նախատեսված 19.8 մլն դրամը:

9. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրով 2020թ. 1-ին կիսամյակում նախատեսված 10.7 մլն դրամ միջոցներից կորոնավիրուսի համավարակով պայմանավորված ծախսեր չեն իրականացվել:

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 243,512.50 հազ.դրամ գումար, 2020թ. առաջին կիսամյակի պլանը կազմել է 97,556.20 հազ.դրամ, նույնքան էլ ճշտված պլանը, դրամարկղի ծախսը՝ 84,592.22 հազ.դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 12,963.98 հազ.դրամ:

Տարբերությունը, ֆինանսների նախարարության հիմնավորմամբ, պայմանավորված է բանկերի կողմից փաստացի մատուցած ծառայություններով, ինչպես նաև այն հանգամանքով, որ հունիս ամսվա մատուցած ծառայության դիմաց վճարումները կատարվել են հուլիս ամսին:

11. ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

«ՀՀ միջազգային վարկանիշի տրամադրում» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 80,816.70 հազ.դրամ գումար, 2020թ. առաջին կիսամյակի պլանը կազմել է 80,816.70 հազ.դրամ, ճշտված պլանը՝ 82,316.70, դրամարկղի ծախսը՝ 80,164.69 հազ.դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 2,152.01 հազ.դրամ:

Տարբերությունը, ֆինանսների նախարարության հիմնավորմամբ, պայմանավորված է նրանով, որ պլանի փոփոխությունը կատարվել է հունիս ամսին, իսկ վճարումը կատարվել է հուլիս ամսին:

12. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՄԻՄՅԱՆՑ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

«Գնումների պլանների կազմման, էլեկտրոնային մրցույթների անցկացման, պայմանագրերի կատարման և գնումների հաշվետվողականության՝ միմյանց ինտեգրված մոդուլների տեխնիկական սպասարկում» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 99,955.00 հազ.դրամ գումար, 2020թ. առաջին կիսամյակի պլանը կազմել է 59,978.00 հազ.դրամ, նույնքան էլ կազմել է ճշտված պլանը, իսկ դրամարկղի ծախսը՝ 43,735.72 հազ.դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 16,242.28 հազ.դրամ:

Տարբերությունը, ֆինանսների նախարարության հիմնավորմամբ, պայմանավորված է նրանով, որ Armeps և PPCM գնումների համակարգերի սպասարկման նպատակով կնքված պայմանագրերի շրջանակներում հունիս ամսին մատուցված ծառայության դիմաց վճարումները կատարվել են հուլիս ամսին, իսկ էլեկտրոնային աճուրդի համակարգի ծրագրային ուղղումների գնման պայմանագրերը գտնվում է կատարման փուլում:

13. ԴՈՏԱՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

«Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրում և Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով թվով 502 համայնքների համար նախատեսվել է 55,378,535.0 հազ.դրամ գումար, 2020թ. առաջին կիսամյակի պլանը կազմել է 27,689,281.8 հազ.դրամ, նույնքան էլ ճշտված պլանը, դրամարկղի ծախսը՝ 27,689,031.7 հազ. դրամ:

Նշված ծրագրի շրջանակներում ծախսերը ունեն հետևյալ կատարողականները.

(Աղյուսակ 14)
Հազ. դրամ

Ծրագիր (հոդված)	2020թ. առաջին կիսամյակի ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղ ային ծախս	Փաստացի ծախս	Կատարման %-ը $6=4/2 \times 100\%$
1	2	3	4	5	6
Ընդամենը	27,689,281.80	27,689,031.7	27,689,031.7	27,689,031.7	100.00
Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ	27,656,143.30	27,655,968.4	27,655,968.4	27,655,968.4	100.00
Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում	33,138.50	33,063.30	33,063.30	33,063.30	99.77

V. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

VI. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

VII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության արդյունքում անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից առաջարկություններ չեն ներկայացվել: